

Առօրս

ՆՈՐԱՀԱՍՆԵՐՈՒ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԶԱԲԱԹԱԹԵՐԹ

◆ Խմբագիր ◆
ԳՐ. Հ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

◆ Տէր Եւ Տնօրէն ◆
Մ. ՍՈՒՐԵԱՆ

Ա. ՏԱՐԻ, ԹԻԻ 16

ԳԻՆ 100 ՓՐ.

5 ՅՈՒՆԻՍ 1920



Թէ՛ հայ եւ քէ՛ օտար շրջանակներու մէջ
գնահատուլի եւ համակրանի տրժանացած

ԳՈՒՄԳԱԲՈՒԻ «ԲՆԱՐ», ԵՐԱԺՅՅ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՖԱՆՖԱՌԻ ԽՈՒՄԲԸ

ՀԻՄՆՈՒԱԾ 1910 ՕԳՈՍՏՐՍ 1-ԻՆ

առաւ - 920 - 16 - 1

ՏՔԹ. ՏԻԳՐԱՆ ԽԱՉԵՐԵԱՆ

Մասնագէտ ներքին, ջղային
եւ տղայոց հիւանդութեանց
Գումգարու, Զիֆթէ Կէլին, դեղ. Ա. Ս.
Արսէնեան, թիւ 118 եւ Կէտէկ Փաշա
Նէվիէ ճատտէ, թիւ 73

Կատարեալ լաջողութեամբ կը դարմանէ
ստամոքսի, աղիքներու, սրտի եւ թո-
քերու հիւանդութիւնները, երկարամեայ
փորձառութեամբ եւ խոր ուսումնասի-
րութեամբ հնարած է մասնաւոր դար-
մանում մը ջղային տկարութեան, լուս-
նոտութեան (սարա) եւ գլխացաւի. Հիմ-
նական դարմանում բոլոր ջղային հի-
ւանդութեանց. Կենսաբանական վերջին
տուիքներու համաձայն կ'արգիլէ ժա-
մանակէ առաջ ծերանալը եւ կը բուժէ
անոր հետեւանքները եղող անկարողու-
թիւնը, ընդհանուր տկարութիւնը եւ ին-
կածութիւնը. Առողջական վիճակի ման-
րագնին ընկերութեամբ ապագայ հաւա-
նական ծանր հիւանդութեանց առաջըր
կ'առնէ. Հիւանդագին եւ փափկակազս
տղաքներու առողջական վատթար վի-
վիճակը կը բարեփոխէ.

ՆՈՐ ՀԱՅՈՒՍՏ. — Պզտիկներ, 250
դրրւշով նոր եւ ճաշակաւոր ամառնա-
յին հագուստ ունենալու համար ծնողը-
նիդ առաջնորդեցէ՛ք Զարմաքըրլար,
Մեծ Նոր խան, Բ. յարկը, Կ. Յ. Թուխ-
տարեան ընկերութեան վաճառատունը.

Փ Ա Ս Տ Ա Բ Ա Ն

ՃԷՔԷՐԵԱՆ

Զարմաքըրլար, Սեպուհեան խան, թ. 40

ՏՔԹ. ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ

Մ Ա Ս Ն Ա Գ Է Տ

Ներքին եւ մորթային հիւանդութեանց
Պայագիտ, Մարասըրլար, թիւ 5

ԲԺՇԿԱԿԱՆ ԴԱՐՄԱՆԱՏՈՒՆ

ՏՔԹ. ԵԴ. ՄՈՒՐԱՏԵԱՆ եւ

ՏՔԹ. Կ. ՔԷՐԷՍՏԷՃԵԱՆ

Ներքին եւ մորթային հիւանդութեանց
Պոլիս, նոր նամակատան կից Նիւզհէթ
Զիա դեղարանին վերնայարկը.

ԱՐԴՈՒԶԱՐԴԻ ԵՒ

ՆՈՐԱՉԵՒՈՒԹԵԱՆՑ

Վ Ա Ճ Ա Ռ Ս Տ ՈՒ Ն

ՍԱՀԱԿ ՍՎԱՃԵԱՆ

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՔԱԼՓԱՔՃԻՆԵՐՈՒ ՃԱՏՏԷՆ
ՔԻՒՐՔՃԻՆԵՐՈՒ ԴՐԱՆ ՃԻՇՏ ԴԷՄԸ Թ. 2

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ. — Ճաշակի տէր
տիկիներու եւ օրիորդներու ի գիտու-
թեան կը հաղորդենք թէ Տիար Սահակ
Սվաճեան եւրոպայէն բերել տուած է
մեքենայ մը որով ամէն տեխակ կեր-
պասներու վրայ վերջին ձեւով եւ հա-
մաշափօրէն ֆիլիսէ կը կոտորուի. Առի-
թէն պէտք է օգտուիլ

ԱԶՔԸ ԼՈՅՍ

Իրենց առողջութեան

նախանձախնդիր անձերուն

ՏՔԹ. ՄԱՐՏԻԿ Յ. ՐԷԻՍԵԱՆ

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Պոլիս, նոր նամակատան կից, Նիւզհէթ
պէյի դեղարանը, ուր գիտական ամենա-
վերջին նորութեամբ կը դարմանէ բերնի
եւ ակռաներու հիւանդութիւններ. կը
շինէ երաշխաւորեալ տոկունութեամբ եւ
նրբաճաշակ առամնաշարեր, գուրօններ,
պռիճներ եւ բիլօներ.

ԿԱՏԱՐԵԱԼ ՃՇԴԱՊԱՀՈՒԹԻՒՆ

ԵՒ ՄԱՔՐՈՒԹԻՒՆ

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

ՏՔԹ. ՏԻԳՐ. ԵՂԻԿԵԱՆ

Պապը Ալի ճատտէպի, Օրխան պէյ խան
թիւ 22

Գիտական խնամք եւ զեղարուեստական
ամենանուրբ ճաշակ, կատարեալ ճշդա-
պահութիւն եւ մաքրութիւն.

ԿՈՊԵՌՆԻԿ ԽԱՉԱՏՈՒԹԵԱՆ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ 1900 ԻՆ

Կեդրեան Պահեն Գաբու: Մէյվախօս Խան—Հեռաձայն Սրամպուլ 319

ԽՄԲԱԳԻԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Սիրելի փառքիկներս,

Յունիսի առաջին շաբաթն ենք։ Ամառուան առաջին օրերն է ու մենք կը սկսինք խորհիլ ամառուան արձակուրդի հաճելի ամիսներուն մասին, որոնց իրաւունք ունենալ կը կարծենք մեր դպրոցական շրջանի աշխատութիւններուն իբրեւ վարձատրութիւն։ Եւ կը կարծեմ թէ չիտակ ալ է այդ, որովհետեւ ամէն աշխատութեան, մանաւանդ մտաւոր աշխատութեան շրջանէ մը ետքը յարմար է ու իրաւունք է որ մարմննիդ հանգիստի շրջան մըն ալ ունենայ։ Ահա ատոր համար է որ սովորութիւն եղած է ամառնային այս արձակուրդով մարմնական ու մտաւոր հանգիստի և կազդոյրի առիթ մը տրուի բոլոր մտքի մշակներուն, ըլլան անոնք ձեզ նման դեռատիներ, որոնք դպրոցական պարտականութենէ զատ ոչինչ ունին իրենց զբաղում, կամ ըլլան միտքի մշակներ, որոնք մտաւոր ծանր աշխատութիւններով կը յոգնին չարաչար։


Բայց այս նպատակայարմար ու օգտակար արձակուրդի շրջանին իրաւունքով արժանի ըլլալու համար կ'ենթանդրուի որ մենք կատարած ենք աշխատութեան շրջանի մեր բոլոր պարտականութիւնները։ Արդեօք այնպէս է ամէնուրեւ համար, որ դեռ դպրոցական գրասեղաններու վրայ կը հակէք ձեր անամպ ու անխորշոմ ձակատները։ Կը յուսամ թէ այնպէս է և դուք իրաւունք չահած էք այս արձակուրդի ամիսներուն հանգչելու և կազդուրուելու։ Բայց այդ ինչով յայտնի պիտի ըլլայ ու ապացուցուի հանգիստաւորապէս։ Բնականաբար ձեր դպրոցական այս վերջացող շրջանին աշխատութեանց ու յառաջդիմութեան իբրեւ փորձաքար կատարուելիք ձեր ֆենուրիւններով։ Այո՛, քնդհանրապէս ձեր քննութիւններն են ձեր աշխատասիրութեան անսխալ ու անուրանալի ապացոյցները, որոնց յաջողութեան համար գիտեմ թէ դուք ալ նախանձախնդրութիւն ունիք և թերեւս քիչ մըն ալ կը մտահոգուիք։ Բայց ես այս առթիւ ձեզի պիտի ուղէի թելադրել որ բնաւ չմտահոգուիք այդ մասին։ Մանաւանդ երբ կանոնաւորապէս կատարած էք ձեր ամենօրեայ պարտականութիւնները։ Ամենօրեայ այդ պարտականութեանց անթերի կատարումը ուրիշ բան մը չէ եթէ ոչ ձեր աշխատասիրութիւնը, որ միակ բանալին է ձեր յաջողութեան։

Հետեւաբար, նկատի ունենալով քննութեանց մտաւորութիւնը, և պատրաստութիւնը որոնց յաջողութիւնը պտակումն է ձեր աշխատութեանց, պիտի փորձեմ ընել ձեզ կարգ մը դործնական թելադրութիւն-

ներ, որոնց հետեւելով՝ կը յուսամ թէ պիտի կարենաք աւելի յաջող քննութիւններ տալ, գնահատուիլ, ու պատիւ բերել ձեր ուսուցիչներուն և ուրախութիւն ու հպարտութիւն պատճառել ձեր ծնողքներուն։ Բայց այդ թելադրութիւնները չըրած նախ փորձեմ ձեզ հասկցնել թէ ի՞նչ է աշխատասիրութիւնը։

Մարդս գործի ու աշխատասիրութեան համար ստեղծուած արարած մըն է։ Անգործութիւնը ամենամեծ չարիքն է, որ կարելի է երեւակայել մարդուն համար։ Անգործ ու ծոյլ մարդը թէ իր անձին թէ ալ իր պատկանած ընկերութեան համար աւելորդ բեռ ու նոյնիսկ վտանգ մըն է իբրեւ չարին ու չարիքին պատրաստ որս կամ գործիք մը։ Հետեւաբար մեր ֆիզիքական կազմին ու մտաւոր կարողութիւններուն և ընդունակութեանց համար աշխատութիւնը ամենամեծ բարիքն է ու անփոխարինելի օրհնութիւն մը։ Որովհետեւ անոնց գործելովն ու աշխատելովն է որ ֆիզիքական ու մտաւոր ուժ և կորով կը ստանանք։ Ինչպէս որ գործող երկաթը կը փայլի, այնպէս ալ աշխատող մարմինն ու միտքը կը զօրանան։ Ուրեմն, ըսել կ'ըլլայ թէ աշխատութիւնը թէ՛ մեծ բարիք, թէ՛ ալ կենսական կարիք մըն է մեզի համար։ Եւ ահա այս ճշմարտութիւնը աղէկ ըմբռնելով գործ և աշխատութիւնը սիրել յուն, ամէն տեսակ աշխատութիւնները ինքնաբոլիս յօժարութիւնով մը կատարելուն աշխատասիրութիւն կ'ըսենք։ Կրնայ ըլլալ որ կ'աշխատինք առանց յօժարութեան, բռնութեան տակ, այո՛, այդ ալ աշխատիլ է, բայց աշխատասիրութիւն չէ։ Գերի մը իր անողորմ տիրոջ մըտրակներուն տակ կրնայ շատ գործեր կատարել, բայց այդ աշխատասիրութիւն չէ։ Ճշմարիտ աշխատասիրութեան մէջ կամքը և յօժարութիւնը մեծ բաժին ունին, և աշխատութիւնը փափաքելիօրէն արդիւնաւոր ընողներն ալ ասոնք են։ Ուրեմն, ըսել է թէ նախ հաւատք ու համոզում ունենալու ենք թէ մենք աշխատութեան համար ստեղծուած ենք, թէ աշխատութիւնը՝ մեծ բարիք ու օրհնութիւն մըն է մեզի համար, և ահա այն ատեն պիտի սիրենք աշխատութիւնը և կամք ու յօժարութիւն յառաջ պիտի դայ մեր սիրտերուն մէջ աշխատութեան համար։ Եւ այն ատեն միայն պիտի ըլլանք ճշմարիտ աշխատասէրներ։ Արդէն շատ լսած էք աշխատասիրութեան օգուտներուն մասին։ Մեղուներու և մրջիլներու օրինակներով յաճախ չեչտուած է ձեզ աշխատասիրութեան օգուտը, և անոր ունեցած կարեւորութիւնը։ Ես ալ ենթադրելով թէ դուք համոզուածներ էք աշխատասիրութեան կարեւորութեան և օգտակարութեան մասին չսխալի ուղեմ աւելի ծանօտանալ այդ կէտին վրայ։ Այլ այս անգամ աշխատասիրութեան մասին տուած բացատրութիւններս բաւական համարելով, յաջորդով պիտի խօսիմ ձեզ մեր աշխատութիւնները արդիւնաւոր ու օգտակար ընելու կարգ մը եղանակներու և միջոցներու մասին, յուսալով թէ անոնք իբրեւ շատ սլարդ ու գործնական թելադրութիւններ օգտակար պիտի ըլլան ձեր ամէնուն համար։

ԿԱԽՕՐՐԱՆԸ



Կախօրրանը կը հօնի
Կաղնիին սակ հովանուս,
Մեկ վեր, մեկ վար, հանելի
Կ'օրօրունի գուարք ու անփոյթ:

Կը գովացնէ հովն անուշ
Մեր դեմքերն ու նակասներ,
Լոյս մ'ալ բեկբեկ ու քննուշ
Կը մաղուի վար՝ վրան մեր:

Թռչունի պէս թեւաւոր,
Ամպի նրման օդապար,

Կը սլանանք մե՛նք աղուոր՝
Ե՛ս եւ առաջ յամբար:

Նետեցէք մեզ անգամ մ'ալ,
Մինչեւ հասնինք ճիւղերուն,
Կարծես նաւենք անալալ՝
Ծովին վրայ փրփրուն:

Ա՛յ կը հօնինք մեղմաբար,
Ծովի նրման խաղաղած,
Կը բաւէ ա՛յ, սանք դադար՝
Հանելի չէ՞ր մեր ժամանց:

(Հետեւողաբար)

ԳՐ . Հ . Գ .

ԱՌԱՎԱՆԻ

ԱՌԱՎ-ՔԱՌԵԱԿՆԵՐ

Էօր կը տաւ
Զին է ուսողը,
Աղփասն աշխատի,
Զոգն է ուսողը:



Էգին տուր,
Խաղող մը չես տեսներ.
Պարտեզ տուր
Պտուղ մը չես տեսներ:



Ընողաց,
Գնողաց.
Մի՛ մոռնար,
Կա՛յ Աստուած:

Թուքը գործին համար
Անձրեւ է,
Հրազը հանձնին համար
Արեւ է:



Ինչ կը ցանես,
Ան կը փաղես,
Զարիք չընես՝
Որ չաւաղես:



Ինչ չես ուզեր
Քրոջը,
Մի՛ կամենար
Տալոջը:



«Իմքս» ու «փու»ն,
Աւեր են տուն:
«Ես» եւ «դու»ն
Կը լռիւի բոյն:

ԱՌԱՎԱԽՕՄ

ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ

Դ.

Պ Տ ՈՒ Ղ

Ամառնամուտի առթիւ կե-
ռասն ու ելակը իրենց հաճելի
տեսքով ու անուշ համով, իբրեւ
յառաջապահը պտուղներու բու-
նակին, աշդէն սկսած են հրաւի-
րել ձեր ուշադրութիւնը և սրել
ձեր ախորժակները: Պտուղները,
համեղ, մսուտ, չաքրոտ, տես-
քոտ պտուղները ի՞նչ մեծ բա-
րիքներ են Մայր-Բնութեան, որ
իր ամաղթեղջիւրէն իբրեւ նոր
առատութիւն կը թափէ մեզ զա-
նոնք ամէն տարի: Կրնանք շատ
տեսակ պտուղներու մասին խօ-
սիլ բացատրելու համար անոնց
կազմութիւնը և ուրիշ յաակու-
թիւնները, բայց օրինակի համար
առնենք՝

Խնձոր մը. — Եթէ խնձոր մը
կիսէք մէջը ի՞նչ կը տեսնէք:
Հունտերը, այնպէս չէ: Այս հուն-
տերը կը սկսին ածիլ ծաղիկին
իգայի կամ սերմնաւիակին տակը:
Վարդազոյն շափրակները և որ-
ձաներուն փոքր թելիկները կ'իյ-
նան ու յետոյ փոքրիկ սերմերը
կամ հունտերը կը շարունակեն
աճիլ և անոնց շուրջը կ'աճին
ծաղիկին կանանչ ու կարմիր մա-
սերը:

Երբ փոքրիկ սերմերը ու ծա-
ղիկին տակի մասերը աճիլ կը
շարունակեն՝ խոշոր, կլոր խնձորը
և մէջի սերմերը կը հասունանան:
Ուրեմն, սերմին շուրջի մասը ինչ
օգտակարութեան համար կ'աճի:
Օ՛, կ'աճի որ այդ մասը ուտենք,
սխալի պատասխանէք բնականա-
բար:

Այո՛, այդպէս է. բայց ամէնը
այդ չէ: Խնձորը երբ մէկ կողմէն
կ'աճի, միւս կողմէն ալ սերմերու
աղուոր պատասպարան մը կ'ըլ-
լայ: Խնձորի այդ մսոտ մասը
սերմերը օգին ու փաստակար ճճի-
ներուն դէմ պաշտպանած կ'ըլ-
լայ: Վերջապէս նուրբ ու փոք-
րիկ սերմեր կը հասունանան և ի-
րենց վրայ կարծր կեղեւ մը կը
կապեն:

Ահա սերմերու այս տունը
մենք պտուղ կ'անուանենք: Հոգ
չէ թէ այդ պտուղը կարենանք ու-
տել թէ ոչ՝ այդ բոյսին պտուղն
է: Բոյսերէն հաղարաւորներ կան,
որոնք պտուղ կուտան, բայց մենք
չենք ուտել զանոնք:

Գետնախնձորը պտուղ չէ. —
Սխալելու չենք և պտուղ չեղող
բաները պտուղ կոչելու չենք:
Մեր գիացած սովորական գետ-
նախնձորները (փաթաթէս) պտուղ
չեն. անոնք խլուկ կոչուած գետ-
նախնձորի արմատներ են, որոնք
գետնախնձորի տունկին ստորերկ-
րեայ ցողուններուն վրայ կ'աճին:
Երբ գետնախնձոր մը կտրես, մէջը
սերմ չես գտներ. բայց ան ալ
ունի իր սերմը: Անոր ծաղիկը,
պտուղը և սերմը տունկին հողին
վրայ ցցուած ստիկներուն վրայ
կ'ըլլան: Բայց գետնախնձորի
տունկը սովորաբար անոր պտուղ-
ներուն հասունանալէն առաջ կը
պեղեն, որովհետեւ պարտիզպանը
զանոնք մշակելով ուրիշ նպա-
տակ մը չունի, եթէ ոչ ստորերկ-
րեայ այդ խլուկները հասցնել,
զորոնք մենք կ'ուտենք իբրեւ
գետնախնձոր և տունկին ուրիշ
մասերը մեզի օգտակար չեն իբրեւ
ոնունդ:

Լուիկը (տոմարէս). — Բայց լուիկին տունկը այնպէս չէ. արմատին վրայ խլուկներ չունի. այլ մեզ իբրեւ սնունդ ծառայող այդ կարմրուկ լուիկները կը հասցնէ իբրեւ պտուղ: Լուիկն ալ երբ կտրես՝ ինչ կը տեսնես. բազմաթիւ սերմեր, չէ՞: Ահա այդ կը ցուցնէ թէ լուիկը պտուղ մըն է:

Սակայն, գետնախնձորի և լուիկի տունկերը իրարու շատ կը նմանին. կարծես նոյն ընտանիքին մէջ քոյրեր ըլլային. բայց լուիկի տունկին՝ պտուղը, իսկ գետնախնձորի տունկին ոչ թէ պտուղը, այլ խլուկները կ'ուտենք, որ գետնին տակ կ'աճին:

Գետնատանձն ալ պտուղ չէ, ան ալ տունկին արմատներուն վրայ բուսած խլուկ է, և այս տունկն ալ պատաստուկի տունկին նման ծաղիկներ և պտուղ ունի: Անոր այս քոյր տունկը, պատաստուկը, արմատին վրայ խլուկներ չունի, բայց շատ սիրուն ծաղիկներ ունի: Ուրեմն, մի մոռնաք թէ բոյսի մը մինակ պտուղը չէ որ կ'ուտենք. բայց բոյսին պտուղն է որ սերմը իր մէջ կը պարունակէ: Լուբիայի պարկուճը լուբիայի տունկին պտուղն է ու երբ այն չորնայ ու ճեղքուի, ներսը կը տեսնենք հասած սերմերը, որ մեր կերած լուբիայի հատիկներն են: Նոյնն է նաեւ սիսեռը: Սիսեռը իր տունկին սերմն է ու սիսեռի պարկուճը անոր պտուղը:

Պտուղներու ձեւերը. — Պտուղները շատ ձեւ կ'ըլլան. բայց ամէնն ալ իրենց կլորածեւութիւնը ունին: Խնձոր, կիւսի, իւրիշ,

դեղձ, նարինջ, լեւոն, խաղող, ձմերուկ, սեխ, հաղարջ, ասոնցմէ որ և է մէկը առնենք, ինչպէս նաեւ ընկոյզի, կաղինի նման պտուղները, մօրենին եւ այլն, բոլորն ալ կլորածեւութիւն մը ունին: Սակայն կան պտուղներ, որոնք կլորածեւ չեն ասոնց նման. դղբին մկրատածեւ պտուղ մը ունի, որուն կոթունին մօտիկն են զոյգ մը սերմեր. սերմերուն վրայէն ճանճի թելիկներու պէս երկու բարակ թելիկներ կը ցըցուին, որոնք պտուղին հասունանալէն ետքը օդին մէջ կը տարտղնուին: Խողկաղինն ալ պտուղ մըն է, որ գլակ մը ունի վրան: Բոյսերէ ոմանք ալ տփիկի պէս պտուղներ ունին: Երբ այդ պտուղները հասունանան՝ տփիկը կը բացուի և սերմերը դուրս կը թափին: Հասարակ ծներեկը կամ փրփրեմը, որ աղձանի բոյս մըն է ու կ'աճի պարտէզներու մէջ, ահա այս տեսակ պտուղ մը ունի: Ինչպէս որ տերեւները և ծաղիկները շատ տեսակ ձեւեր ունին, այնպէս նաեւ պտուղները ունին շատ ձեւեր:

Յորդուր. — Պտուղներու մասին այս պարզ դասը աւելի երկարել չեմ ուզեր: Ասկէ ետքը երբ պտուղները կ'ուտէք ախորժակով, ուշադրութեամբ ուսումնասիրեցէք նաեւ անոնց սերմերը, կեղեւը, կամ պարկուճը, ձեւը, կոթունը, և այլն: Կարծեմ ամէնդ ալ պտուղներու մասին այս դասը աւելի պիտի վայելէիք. երբ աղուոր ու խոշոր պտուղներով դարդարուած սեղանի մը առջեւ դրանուէիք, թէ սորվելու, թէ ալ

ախորժակով ուսուցիչ համար :
Բայց, սիրելի փոքրիկներ, ան-
համբեր մի ըլլաք, ինչպէս դասին
սկիզբը ըսի, կարմրուկ կեռասն
ու վարդագոյն ելակը արդէն բա-
րեհաճեցան իրենց հաճելի ներ-
կայութեամբ պատուել մեզ : Աս-
կէ ետքը պիտի գան նաեւ միւս
պտուղները ետեւէ ետեւ. կերէք,
զովացէք և մի մոռնաք այս բո-
լոր բարիքներու Տուողէն գոհա-
նալ :

Յաջորդ և վերջին դասը պի-
տս ըլլայ սերմերու և հունձերու
մասին : Յուսամ այդ ալ պիտի
սիրէք ու պիտի պահէք ձեր յի-
շողութեան մէջ :

Ամփոփեց
ԳՐ. Հ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

ԲՆԱԽՅԱՆԱԿԱՆ

ԱԿՈՒՅ

ԵՒ ԱՆՈՐ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ



Յառաջաբան. — Նիւթը որուն
վրայ պիտի խօսիմ թէև նոր չէ,
բայց այնքան թանկարժէք ու
այնչափ հազուագիւտ բան մըն է
որ եթէ ամէն օր ու ժամ ալ ա-
նոր մասին խօսինք, անով զբա-
ղինք, դարձեալ պէտք եղածին
չափ իրմով հետաքրքրուած,
զինքը ճանչցած, ու զայն ձեռքէ
չհանելու համար պէտք եղածին
չափ պատրաստուած չենք ըլլար.
ըսի՞ թէ ա՛յդ մեղի բնականօրէն
չնորհուած աստուածային պար-
զեւ մըն է, որուն յարգը, մեր
մէջ դժբախտաբար շատ քիչեր
գիտեն . . . :

Անշուշտ հասկցուեցաւ որ խօ-
սելիքս առողջօրեան մօտ է :

Երբ ես ուսուցչիս դասախո-
սութիւններուն կը հեռուէի հիա-
ցած, գրեթէ, բոլոր դասատու-
ներս ալ—ազնիւ ու անձնուէր
անձինք—մեզ կ'առաջնորդէին,
իրենց դասախօսութիւններով,
ա՛յն դադափարին թէ՛ խելացի,
գեղեցիկ, պօրաւոր, առոյգ, ժրա-
ջան, նկարագրի տէր, ու կայտառ
ըլլալու համար անհրաժեշտ է ու-
նենալ առողջ մարմին մը, և այդ
ուղղութեան կամ սկզբունքին
վրայ ալ, կազմած էին յարմար
բաժանոնմներով ժամանակացոյց
մը, ա՛յնպէս որ. օրուան մեծա-
գոյն մասը տրամադրուած էր ա-
ռողջապահական պահանջներու,
և սակայն հո՛ն բա՛ն մը կար մոռ-
ցուած, բան մը՝ որ ամենէն ան-
հրաժեշտն էր, ամենէն կարեւորը
և ստիպողական պահանջ կար
նախ անով զբաղելու . . .

Թէ ի՛նչ ! .

Ատոր պատասխանելէ առաջ
ձեզի պզտիկ օրինակ մը պիտի
տամ .

Կառախուժի վայրաշարժ մը
կայ, լաւ ներկուած, նոր կաթ-
սայով ու նոր մեքենայով : Ամէն
օր պաշտօնեան լաւ մը կը իւ-
ղոտէ ու կը մաքրէ դանոնք,
միայն թէ, խեղճը, թէև կը տես-
նէ որ, երկաթ ձողերուն վրայէն
գլորող անիւները քիչ մը մաշած
են, բայց ի՛նչ հոգ, չէ՞ մի որ
ասոնք երկրորդական կարեւո-
րութիւն ունին, կը բաւէ որ մե-
քենայները նոր են, կաթսան ա-
մուր, և գործիքները իրար միա-
ցնող կամ հաղորդակցութեան մէջ
դնող պտուտակները պօրաւոր, և
որ ա՛յն տեսին է, ամէն օր ալ էր

իւղոտէ և մաքրութեանն ալ հոգ կը տանի, թո՛ղ քիչ մը անիւնները մաշած ըլլան ի՛նչ վնաս ունի:

Բայց դիտէ՛ք թէ ի՛նչ կը պատահի.

Վայրաշարժը ճամբայ կտրած ատեն անիւններուն հինցած ըլլալուն հետեւանքով յաճախ թեթեւօրէն կը ցնցուի, և այս վիճակը կը շարունակէ երկար տարիներ, ու օր մ'ալ, այս յարատեւ ցնցումներուն հետեւանքով մեքենայներու պտուտակները թուլցած մէկէն կը քաղուին. մեքենայները կը տարտղնին, կաթսան կը բացուի, շոգին կը պարպուի և կառախումբը կ'ստիպուի դադրեցնել իր ճամբան, մինչև որ ուրիշ վայրաշարժ մը դայ ու քաշէ տանի:

Նոյնպէս ալ, առողջ ստամոքսի տէր մէկը, որուն սիրտն ալ, թոքերն ալ կանոնաւոր կերպով կը գործեն, օր մը չէ եղած բնաւ որ հիւանդանայ, և ամէն օր ալ լոգանք, պտոյտ, կանոնաւոր ճաշ, չափաւոր աշխատութիւն, մարմնամարզ. ևլն. կ'ընէ, ռայց չի խորհիր թէ պէտք է հոգ տանիլ նաև ակռաներուն, և օր մը կ'սկսի ակռայի ցաւէ տառապիլ, կը դիմէ իր թաղին սափրիչին դարման խնդրելու, մարդն ալ իր հասկցած եղանակով, յաճախորդին օգտակար ըլլալու գաղափարով ակռան կը հանէ, ցաւը անշուշտ կ'անցնի: Քիչ մը ժամանակ յետոյ, երկրորդ մը նոյն բաղդին կ'արժանանայ, յետոյ երրորդ մը, չորրորդ մը, և օր մըն ալ խեղճ մարդուն բերանը գրեթէ

ակռայ չի մնար. թէև վերջինս կը շարունակէ հոգ տանիլ սփորաներու, լոգանքի, և սակայն շարագոյն օր մը ստամոքսի ցաւը կ'սկսի, մարտդութիւնը կը տկարանայ, ամէն բան չի կրնար ուտել, կերածը չի կրնար մարսել, օրէ օր անզգալաբար կը հիւծի, և ժամանակէ առաջ ծերութիւնը վրայ կը հասնի. ա՛լ անկէ վերջ իր կեանքը կ'ըլլայ տառապանքի կեանք մը:

Հետեւաբար հոգ տարէ՛ք ձեր ակռաներուն մաքրութեան, խնամեցէ՛ք զանոնք, որպէսզի, իր վայրաշարժին անիւններուն ուշադրութիւն չդարցնող մեքենավարին նման օր մը ճամբան մնալու դժբաղդութիւնը չունենաք:

Թէ ի՛նչ և ի՛նչպէս պէտք է ընել որ առողջ ստամոքսի ունենաք:

Ահամիտաւր ԷԼ անուր կազմութիւնը. — Ակռաներու բերնի մաքրութիւնը ճ շարտօրէն ձեռք բերելու և պահպանելու համար անհրաժեշտ է գիտնալ անոնց կազմութիւնը, պաշտօնը և տկարացման կամ հիւանդութեանց պատճառները, հետեւաբար պիտի կրննամ, հակիրճ կերպով, բացատրել ձեզ ակռաներու ծնունդը. տեսակը, հիւսուածարանական կազմութիւնը, փտումը (carie), հիւանդութիւնները, դարմանն ու առողջապահութիւնը:

Ակռան մարդուն մարմնոյն մաս կազմող ամենէն կարծր և ամենէն տոկուն գործարաններէն մին ըլլալով հանդերձ իր բնախօսական տեսակէտէն ամենէն ալ փափուկն է, բնութիւնը մարդուն

կը նուիրէ զանոնք երբ տակաւին հազիւ կ'սկսի ածիլ. 5—8րդ ամսոյ մէջ մանուկը կ'ունենայ առաջին երկու ականները (վերի հերձատամները) և ընդ ամէնը 20 ական ըլլալու պայմանաւ կ'ամբողջացնէ իր բերնին մէջ՝ կաթի ականներու շարքը (dents de lait) 20րդէն 36րդ ամիսներուն մէջ:

Այս ատամնաշար ականները, ինչպէս ըսինք կը կոչուին կաթի ականներ, տղան պէտք է որ գործածէ 7էն 11րդ տարին, այսինքն 4 տարի: Այս շրջանին յիշեալ կաթնատամները մէկիկ մէկիկ շարժելով կ'իյնան տեղ տալու համար ճեւական ականներու (dents permanentes), որոնք պէտք է մարդուն ծառայեն մինչև իր մահուան մամը: Սոյն վերջին ատամնաշարէն ու է մէկը որ քաշուած է, ա՛յդ անդառնալիօրէն կորսուած է անձին համար:

ճեւական ականներու ընդհանուր թիւն է 32. ատոնց 16ը վերի կզակին և 15 աչ վարի կզակին վրայ շարուած են: Սոյն մէն մի 16 ականներու խումբերն ալ իրենց գիրքին և ձեւին համեմատ կը բաժնուին 2 մասի, այնպէս որ եթէ մէկու մը քթին ուղղութեամբ դանուող երկու խոշոր ականներու մէջտեղէն երեւակայական միջնագիծ մը (ligne médiant) անցընենք, այս գիծին աջ ու ձախ կողմերը 8 ական ականայ կը գտնուին և այդ գծէն սկսելով մէն մի կարգի ականները առանձինն կը նմանին գծին միւս կողմը նոյն կարգին վրայ գտնուող ականներուն:

Այսպէս, միջնագիծէն դէպի ձախ երթալով առաջին ական կը նմանի ճիշդ ան կողմը գրանդուող առաջին ականին, Բ.ը միւս երկուքին Գ.ը միւս կողմի Գ.րդէն և այսպէս շարունակաբար:

Ականները այսպէս մի առ մի իրարու հետ ունեցած նմանութեան վրայ յենլով, կը բաժնենք ընդամէնը 4 դասի, առանձինն անուններով. այսպէս:

Ա. Հերձատամներ վերի և վարի կզակին վրայ, ընդ ամէնը 8 հատ, Բ. Ճեւատամներ վերի եւ վարի կզակին վրայ, ընդամէնը 4 հատ, Գ. Փոքրադորի վերի և վարի կզակին վրայ, ընդամէնը 8 հատ, Դ. մեծ աղօրի վերի և վարի կզակին վրայ, ընդամէնը 12 հատ: Հետեւաբար ընդհանուր ականներու գումարն է 32:

Յառաջիկայ թիւով պիտի խօսիմ ականներու տեսակներուն վրայ:

Ա. ամնաբոյժ

ՄԱՐՏԻԿ ՐԷՐՍԵԱՆ

Ա Ր Ա Ր Ա Տ Ի Ն (1)

Տուե՛ք ինձ տուե՛ք քոչունի քելեր, թոչիմ սլանամ մեարասն ի վեր, Հո՛ն է իմ սանար, հոն է իմ խոբան, Կանգնած դաբերով այդ սարին վրան:

Մեր քաջ նահապետ իր բազկովն անեղ, Քաղցր ազատութեան հոն լարեց աղէղ, Ան մեզ երկինքէն ցոյց տալ յաւիտեան Արարասն՝ աղբիւր մեր

Երջանկութեան:

ՍԻՄՈՆ ԳԱՐԱՄԱՃԵԱՆ

(1) Սոյն փոքրիկ քերթուածը քաղուած է հեղինակին ԱՐԱՐԱՏ «Քերական — Ընթերցարանէն»: որ մամուլի տակ է եւ որ կը խոստանայ մեր բոլոր նախնական ընթերցարաններուն յաջողակ մրցակիցն ըլլալու իր աննման մեթոտով եւ գերազանց նորութիւններով:

ԴՐԱՒՏ ՍԸ ՈՐ՝

ԴԺՈՒՔԻ ԿԸ ՓՈՒՈՒԻ

Գրեթէ յիսուն տարի առաջ առեւտուրի եւրոպական նաւու մը նաւապետը՝ Ուկէանիոյ Փիլիպ-եան Արգիպեղագոսին մէջ գտաւ անծանօթ և անմարդաբնակ կղզի մը։ Այդ կղզին ծածկուած էր սքանչելի բուսականութիւնով, և ոռոգուած առատահոս վտակներով, այնպէս որ կարելի չէր երեւակայել երկիր մը աւելի առուտ, և աւելի սքանչելի։

Նաւապետը իբր ըրած գիւտին վրայ երջանիկ, եւրոպա դարձաւ, վերցուց այնտեղէն ամբողջ գաղթականութիւն մը, և փոխադրեց կղզին։ Այնտեղ գիւղ մը շինել տուաւ, արդարութեամբ բաժնեց հողերը, և իր հպատակներուն վրայ իշխեց ճշմարիտ հայրական հոգածութիւնով։

Եւրոպայէն բերուած էին ամէն տեսակ առաջնակարգ պահածոյ ուտելիքներ, ինչպէս նաեւ օգտակար կենդանիներու ընտիր տեսակներ, որոնք շուտով աճեցան և շատցան կղզիին մէջ, բարգաւաճեցուցին անոր հարստութիւնը գարմանալի կերպով։

Ինչ ատենէն ա՛լ բան պակաս չէր այդ բարեբաղդ երկրին վրայ. ան ունեցաւ մինչեւ իսկ իր պարզուկ վարժարանը, ուսումնասէր խելօքիկ տղաքներով լեցուն։

Հոն, այդ կղզիին մէջ եթէ միակ մարդ մը կար անգործութենէ ձանձրացող՝ այդ ալ բժիշկն էր, որ չունէր ոչ մէկ հիւանդ խնամելիք՝ այդ աշխատասէր և ժուժկալ բնակչութեան մէջ։

Մէկ խօսքով կղզին դրախտաւայր մըն էր։

Բայց դժբաղդաբար պատահեցաւ որ եւրոպական ուրիշ նաւ մըն ալ գայ կղզիին ջուրերուն մէջ, վաճառականութիւն ընելու համար, և այդ նաւէն, շատ մը ապրանքներու հետ ծախուի նաև քանի մը տակառ օղի, թէեւ դադանաբար, որովհետեւ հոն՝ ոգելից ըմպելիներու մուտքը արգիւտած էր։

Այդ վայրկեանէն սկսեալ, անկարգութիւն, ծուլութիւն և բարկացոտութիւն ծայր տուին, խանգարեցին կղզիին խաղաղութիւնը։

Մարդիկ անփոյթ դարձած իրենց ամենէն կենսական զբաղմունքներուն, սկսան չարաչար վարուիլ իրենց կիներուն և տղաքներուն հետ։ Մեծ վիշտ, թշուառութիւն և տառապանք եկան տիրեցին հոն՝ ուր քաղցր խաղաղութիւն և երջանկութիւն միայն կ'իշխէր։ Եւ նոյնիսկ շատ չանցած, հպատակ մարդիկը ոգելից ըմպելիներէն զրգուած, ըմբոստացան իրենց բարերարին դէմ։ Անոնք համարձակեցան հայհոյելու, ըստառնալիք, դաւ և ուրիշ ամէն բան ընելու իրենց թագաւորին դէմ, մինչեւ որ անիկա ստիպուեցաւ փախչիլ իր երկրէն, և գայրացած, սպառազինուած մարդիկներով լեցուն նաւով մը կղզի վերադարձաւ, կռուելու և ապերախտները վռնտելու համար։ Հետեւանքը եղաւ քաղաքական սոսկալի պատերազմ մը. ջարդերը իրար յաջորդեցին։ Աւերը ընդհանուր էր։

Դժոխքն էր այս՝ որ յաջորդեց դրախտի վիճակին։

ԽՈՐՀՈՒՐԴ, ԵՒ ԽՐԱՏ. — Ալ-
քօլամուլութիւնն է որ կրնանք ը-
սել ջնջած է Ովկէանիոյ բնակ-
չութեան ցեղերը: Ան աւերակ
դարձուցած է Եւրոպայի շատ մը
քաղաքները: Ոգելից ըմպելիներու
չափազանց սպառումը հազարաւոր
զոհերու պատճառ կ'ըլլայ ամէն
օր: Ոճիր, անձնասպանութիւն,
խելագարի արարքներ, այս ամէնը
որոշ հետեւանքներն են օղիին և
ոգելից ըմպելիներուն:

Տեսէք թէ ի՞նչ կ'ըսէ բժշկու-
թիւնը՝ խմողներուն, գինովներուն
համար:

«Այն ալքոլամուլը որ իր կիր-
քին գերին եղած է, ո՛չ միայն
կրնայ դէւրաւ ոճիր գործել, ո՛չ
միայն կրնայ շուտով ենթարկուիլ
ամենէն դաժան հիւանդութիւն-
ներուն՝ թէ՛ չալէս են՝ անդամալու-
ծութիւն, թոքախտ, ապուշու-
թիւն, խելագարութիւն, հապա-
անիկա հայրը կ'ըլլայ նաեւ տղաք-
ներու, որոնք իր հիւանդութիւն-
ներուն ենթակայ կ'ըլլան:»

Պէտք է ուրեմն ամէն ատեն
զգուշանալ ոգելիցներէն, չտար-
ուելու համար ա՛յնչափ դարհու-
րելի մոլութեան մը, որ ո՛չ միայն
ձեր մարմինին և հոգիին վնասա-
կար է, հապա կրնայ նաեւ ձեր
ընտանիքին և նմաններուն առջեւ
զձեզ աններելի և ամօթալի օրի-
նակի մը առարկայ դարձնել:

Վ. Մ. ԽԱՉԻԿԵԱՆ

ԶԻՆԿՕԿԻՄԱՅ

ԳՐԻԳՈՐ ԳԱԼՅԱՆ

Կը պատահէ ամեն տեսակ
փոփոխութիւններ, արագ եւ ան-
դիմել Բ. Դ. Գալանեան խան թիւ 35:

ՃՆՃՂՈՒԿԸ ՈՒ ՏՂԱՆ

Տ Ղ Ա Ն

Յուշիկ յուշիկ պահուրսե՞ր ես
Ու վախճալով ծա՛կդ ես մտեր,
Վերէն տեսեր եկեր եմ ես
Հաւ սագ ու բաղ են քեզ ընկեր:
Ահա անոնց կու՛ս տամ առաս
Նայէ դուն ալ վազէ հասիւր,
Նստէ ու կեր տամ քեզ խրատ,
Էգ թռչուններ կ'ըլլան վախկոտ,
Սիրո՛ւն ճննողուկ, արտո՛ւն եղիւր

Ճ Ն Ճ Ղ Ո Ւ Կ Ր

Էջ մը ընեմ ու քո՛վդ գամ,
Սակայն պէտք է գիտնաս որ դուն,
Կայ թեմամի շատ անգամ,
Ինձի նայի քովիդ կասուն,
Եթէ կ'ուզես բարիք ընել
Առաջ անոր խօսէ խօսիդ,
Նայէ ինչպէս կուգամ քովդ:

ՅՈՎ. ԷՍԿԻՆԵԱՆ

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ. — Պրք.
Հմայեալ Ազըլեան, Եաւրուեան,
Կ. Էսմէրեան, մէկ մէկ օրինակ
ԱՌԱՍՈՏ Նորահասներու Հանդէ-
սէն կը նուիրեն Պէշիկթաշի, Սկիւ-
տարի և Գատըգիւղի որբանոցնե-
րուն:

Իսկ Տիկին Պ. րթե Յակոբեան՝
մէկ օրինակ Արնաւուտ Գիւղի
Հայանուէր Որբանոցին, մէկ օրի-
նակ Եէտի Գուլէի որբանոցին և
մէկ օրինակ Օրթագիւղի Աղջկանց
Որբանոցին: Եւ Տիկին Կատարինէ
Աւագեան մէկ օրինակ ԱՌԱՍՈՏ
Դպրոցատէրի Որբանոցին:

ԱՔՍՈՐԱԿԱՆ ԱՂՋՆԱԿԸ

Դ. ԴԵՊԻ ԳԱՆՁԻՆ ԽՈՒՋԱՐԿՈՒԹԻՒՆԸ

«Շո՛ւտ, ազատէ ինքզինքդ :
— Իսկ դո՞ւն, առարկեց Մար-
թա բոլորովին տեղունած :

— Ես քեզի պիտի սպասեմ :»
Ժիւլիէն ասկէ աւելի բան մը
չկրցաւ ըսել : Վասնզի ձերբակալ-
ուեցաւ կոպիտ ձեռքերով որ
զինքը դուռնէն հեռու նետեցին :

Եւ երկու գերմանները կառ-
չեցան դրան ձողերուն և իրենց
բոլոր ուժովը սկսան շարժարկել :

Բայց դուռը երբէք իր տեղին
վրայ իսկ չշարժեցաւ :

Այս դուռը այն դուռներէն
մէկն էր, որ ատենօք, ամենա-
ծանր և բիրտ յարձակումներ կրե-
լու յատկացուած էր :

Տեղակալ Քօթսիւս վանդա-
կափեղկին բացուածքներէն իր
քիթը և կարծիր մօրուքը դուրս
ցցեց և սկսաւ դիտել թէ պիտի
կրնայ նշմարել այն որ զիրենք
այնքան լաւ կերպով խորած և
բանտարկած էր : Բայց ծառեր և
մացառներ միայն տեսաւ :

Այն ատեն կատղածի մը աղա-
ղակը արձակեց, և, դառնալով
Ժիւլիէնի, ըսաւ բռունցքը ցոյց
տալով .

«Դուն օգնեցիր աղջկան, որ
կրցաւ ինքզինքը ազատել, պըղ-
տիկ թշուառակա՛ն, այս բանը
քեզի սուղի պիտի նստի :»

Բայց այս սպառնալիքէն եր-
բեք չաղդուեցաւ Ժիւլիէն : Նոյն
իսկ կը խնդար : Կը մտածէր Մար-

թայի վրայ, որ հիմա արահետնե-
րէ կ'անցնէր արագօրէն : Մանա-
ւանդ որ ան նեղուած էր առ-
տուրնէ ի վեր այս Գերմաններուն
քով : Կարգը իրեն եկած էր նեղ-
ուելու . քիչ մըն ալ ինք պէտք
էր տոկալ :

Ե. ՎԵՐԱԴԱՐՁ

Հինգ վայրկեանի չափ խեղճ
Ժիւլիէն ինքզինքը վայրագ դա-
ղաններուն հետ վանդակին մէջ
բանտուած զգաց : Երկու գերման
զինուորները սկսան նախատել
զինքը իրենց բռունցքները ցոյց
տալով : Դալով տեղակալ Քօթ-
սիւսի պատէ պատ կ'երթար ձօ-
ճելով կատաղօրէն իր դաշոյնը :

Որոշապէս զինուորները կ'ու-
ղէին գէշ խաղ, մը խաղալ անոր
որ զիրենք հող չղթայած էր :
Բայց գերման սպան աւելի խորա-
մանկ, կը մտածէր որ լաւագոյն
պիտի ըլլար հաշտ վերաբերում
մը ունենալ, քան անմիջական
սպառնալիքներ և նեղութիւն
ցոյց տալ . աւելի վերջի թողլով
հաշիւին կարգադրութիւնը : Մէկ
խնդիր միայն իր միտքը կը դրա-
ղեցնէր . իրենց ազատման խըն-
դիրը :

Նախ և առաջ դետնայարկին
մէկ ծայրէն միւսը պտրտեցաւ
տեսնելու համար թէ արդեօք

դուրս ելլելու ուրիշ տեղ մը կա՞յ :
Չի գտաւ :

Յետոյ իր երկու մարդիկը զըրկեց դէպի վանդակադուռը : Բայց ասոնք զայն ի դուռ չարժեցին . այդ շարժումով ընդհակառակը դուռը աւելի տեղաւորեցին , այնպէս որ այլեւս չի կրցան նոյն իսկ շարժել :

Այն ատեն տեղակալ Քօթպիւս ամենէն զօրեղ միջոցին դիմել որոշեց , միակ միջոցը զոր կարելի էր երեւակայել :

Իր երկու մարդոց հրաման ըրաւ , որպէսզի իրենց գործիքները ձեռք առնեն . անոնց ցոյց տուաւ այն տեղը ուր պէտք էր փորել : Բայց այս անգամ ոչ թէ գանձ գտնելու , այլ իրենց ազատութիւնը ձեռք բերելու համար :

Թերեւս կարենային այդ նպատակին հասնիլ երկաթէ ծանր վանդակադուռին տակէն ուղի մը բանալով : Եթէ դուռը չէին կըրնար բանալ , թերեւս կարենային տակէն սողոսկիլ :

Իսկապէս շատ դժուար էր : Պէտք էր որ ծակը շատ խորունկ ըլլար կարենալ անցնելու համար :

Ուստի տեղակալ Քօթպիւս ևս չքաշուեցաւ իր պարեգօտը հանել և գործիքին փարիլ , գործածելով զայն կատաղութեամբ և անվարժ կերպով :

Եւ ուղղուելով ժիւլիէնի , ըսաւ .

«Մեծ հաճոյք պատճառած պիտի ըլլաս մեզի , եթէ թի մը առնես և մեզ օգնես որ անցքը բանանք : Եւ ես կը վստահեցնեմ որ յարմար առնին պիտի կրնանք եկնիլ :»



Տեղակալը քեւեր սօքսած
կ'աշխատի

Ժիւլիէն հանդարտօրէն գործի սկսաւ : Առանց իր զգացած դուռնակութիւնը ցոյց տալու , ան կը մտածէր թէ շատ փորել պէտք պիտի ըլլար բանալու համար գետնուղի մը , ուրկէ կարենային անցնիլ երեք Գերմանները , մանաւանդ խոշոր տեղակալը :

Գալով Մարթայի , ինքզինքը ազատելէն վերջ , մէկ գաղափար միայն ունէր , որ է օգնութեան հասնիլ ազատելու համար խեղճ ժիւլիէնը , որ այնքան ազնուօրէն եկած էր ինքզինքը նուիրել իրեն համար :

Եւ , այն արահետներէն զորս շատ լաւ գիտէր , Մարթա կրցածին չափ արագօրէն կ'ընթանար դէպի Սէնթ-Պարայ սպարակը : Ան ինքզինքին կը հարցնէր , վաղելով հանդերձ , թէ ի՞նչպէս պիտի կրնար մայր Մօրէնի իմաց տալ ժիւլիէնի գլխուն եկած դժբախտութիւնը :

Եւ յետոյ սկսաւ մտածել քաջարի կնոջ այն զարմացումին վրայ , երբ ան պիտի ունենար տեսնելով զինքը իր քով . քանի որ անիկա գիտէր թէ Մարթա , արդէն աքսորի ճամբուն վրայ բաւական հեռու կը գտնուէր :

Բայց տակաւին աւելի մեծ անա-
կընկալ մը կը սպասէր Մարթայի՝
ազարակի աւերակներուն մէջ :
Երբ Մարթա շնչահատ մտնէր մա-
ռանէն ներս, պիտի գտնէր մայր
Մօրէնը որ ուրախ զուարթ կը
խօսէր զինուորի մը հետ : Այդ
զինուորը իր զաւակն էր :

Ֆրանսացիները, գիտնալով որ
Գերմաններէ պարպուած էր այդ
գետինը, վերագրաւած էին զայն :
Եւ յառաջապահ զինուորներուն
մէջ, որոնք եկած էին Լ... քա-
ղաքը հաստատուիլ, կը գտնուէր
Մայր Մօրէնի զաւակը, Լուի Մօ-
րէն, հիմա տասնապետ և պատուա-
նշանի արժանացած :

Կարելի է երեւակայել թէ ի՞նչ
փութկոտութեամբ վազած էր
մինչև Սէնթ-Պարալի ազարակը և
ի՞նչ ուրախութեամբ ողջագուրած
էր իր մայրը որմէ ոչ մէկ լուր
առած էր, այն օրէն ի վեր երբ
Ֆրանսայի այդ անկիւնը գրաւ-
ուած էր :

Լուի Մօրէն նախ բարկացաւ
աղաղակների արձակեց տեսնելով
ազարակին աւերուն և ամբողջա-
պէս կողոպտուած ըլլալը : Յետոյ
սակայն, իր մայրը ողջ առողջ
տեսնելու հաճոյքը, իրեն մոռցնել
տուաւ նիւթական բոլոր այդ վը-
նասները :

Իր աղախինը նշմարելով Մայր
Մօրէն, վազեց զայն ողջագուրել,
և պոռաց .

« Ի՞նչ երջանկութիւն, ամէն
բարեբախտութիւն միանգամայն :
Գտայ տղաս և իմ պղտիկ բարի
Մարթաս վերագարծաւ իմ մօտ :
Բայց ի՞նչպէս կրցար ընել այս
բանը Մարթա : »

— Ինքզինքս ազատեցի ըսաւ
Մարթա հանդարտօրէն :

— Իսկ ժիւլիէ՞նը հարցուց
Մայր Մօրէն իր շուրջը դիտելով :
(Շար.)

ՀԱՆԵԼՈՒԿԻ ԲԱԺԻՆ

ԹԻԻ 36

Քաղաք մ'եմ ես Կիլիկեան,
Եւ, թէ՛ աջէն, թէ՛ ձախէն
Կը կարդացուիմ ես նոյն բան :
Եթէ կըտրես պոչըս դուն,
Պիտի լըսես այն ատեն
Լոկ ձայն մը սուր ու հնչուն :

Փոքրիկ պարոն, ըսէ՛ ճիշդ,
Ըսէ, ի՞նչ եմ, հեշտօրէն,
Դո՛ւն, որ ես լաւ երաժիշտ :

ՕՆՆԻԿ Ա. ՏԷՐ-ԱՐՐԱՀԱՄԵԱՆ

ԹԻԻ 37

Ձայն մի հաներ բարեկա՛մ,
Ամենեւին մի խօսիր,
Անուն իսկ տաս մի անգամ,
Գիտցիր որ զիս մեռցուցիր :

Վ. Մ.

ԹԻԻ 38

Յիսուն երկու եղբայրք կան
Միշտ իրարմէ անբաժան .
Կէսը կարմիր կէսը սեաւ
Տարբեր տարբեր տեսակաւ :

Վ. Մ.

Ճ. Խ. — Իւրաքանչիւր քի-
ւի Հանելուկներ լուծողներուն
անուններուն հրատարակութիւնը,
ինչպէս նաեւ պատասխանները,
միշտ 15 օրը անգամ մը :

آراود
باب عالی جاده سی و سوم ۴۳

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ



**ՊՈԼԻՍ
ԵՒ ԳՎԻԱՌ**

Տարեկան (48 քիւ) 120 Դան.

Վեցամսեայ (24 ») 60 »

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան (48 ») 20 Գրանի

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ.— Առաւօտ նորահասներու պատկերազարդ շաբաթաթերթին հասցէն է՝ Պասլը Ալի, Բ. Դրան ճիշդ դիմացը թիւ 43:

Ս. Կ. Ն. Ա. Բ. Ո. Յ. Ժ. ՏԲԹ. Մ. ԳԱՐԱԿԵՕԶԵԱՆ

Հասցէ՝ Պահճէ Դարու, Իքի Բարուլու
դեղարանը, կէսօրէ վերջ:

ՏԲԹ. ՆԵՐՍԵՍ ՍԱՆՏԱԼՃԵԱՆ

ՄԱՍՆԱԳԷՏ՝ աղանջի, քիթի եւ կոկորդի
հիւանդութեանց

Պահճէ Դարու, Համիտի, թիւրպէսի
դէմ. Արիկ Իւթիւճեան դեղարանի վեր-
նայարկը:

ՏԿԱՐԱԿԱԶՄՆԵՐՈՒՆ ԱԶԻՐ ԼՈՅՍ

**ՍԷԿ ՔԱՆԻ ՕՐԷՆ
DYNAMOGÉNE**

ՈՒԺԱԾԻՆԸ

Կ'ուզայ ուժ եւ առողջութիւն՝ սալ
Պատրաստութիւն դեղագործ Վա-
հան Պէրպէրեանի նուրը Օսմանիէ:

ԿՕՇԻԿ ԳՆՈՂՆԵՐՈՒՆ

Պոլիս, Բարմար գարու, Մարասնըլար,
թիւ 33 փաճառատան մէջ նոր ժամա-
նած ամերիկեան եւ անգլիական կօշիկ-
ներ սխան փաճառուիլ, արանց 400,
կանանց 350 եւ տղայոց 300 դրուշէն:
Կը շինուին նաեւ չափու վրայ կօշիկներ,
տոկուն եւ ծեւաւոր:

ՀԱՅԿ ՄԱՀԱՅՁԱՃԵԱՆ

ՄԱՔՍՍՅՈՒՆ ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐ

Ներածում եւ արտածում

Կը գնէ նաեւ «սթօք» ապրանքներ
Մանմուտ Փաշա, Բամանթօ խան, թիւ 23

ՊԻԻՔԱՍԷԲԹԻՆ BUCCASEPTINE

Այս էլիքսիրը կը յանձնարարուի իբրեւ-
ազգու հականեխիչ եւ դարման բերնի
բորբորումներու, ալուայի ցաւերու, լին-
տերու հիւանդութեանց եւ բերնի գար-
շահոտութեան, ծայնի մարելուն, ամէն
տեսակ հարբուխներու, չոր հազերու,
ալուաները մարբելու եւ ճերմկեցնելու:

ՔՐԷՄ ՍԱՐՔՕՓԹԻՍԻՏ CREME SARCOPHTICIDE

Միակ դարման բորոտութեան, որ
երեք օրէն կատարելապէս կը բուժէ
նին եւ նոր բորոտութիւնը:

Այս երկու դեղերուն, որոնց հայթայթիչը
եւ պատրաստողն է Վահան Պէրպէրեան,
կեդրոնատեղին կը գտնուի Պոլիս, Նուրը
Օսմանիէ ճատուտի, Օսմ. Կեդր. Դեղա-
րանը, թիւ 48:

ՏԲԹ. ԱՐԹԻՆ ՊԷՅ ՏԷՎԼԷԹԵԱՆ

Նախկին վիրաբուժապետ Հայտար Փա-
շայի գին. հիւանդանոցին

Գիտական ամենավերջին մէթոտով, դե-
ղերով եւ ներարկումներով քիչ ժամա-
նակի մէջ առանց ցաւի կը բուժէ վեր-
քեր եւ ախտեր. Կը գտնուի ամէն օր
բացի հիրակիէ, Դարաքէօյ, Ազլ. Փօս-
թին դեմաց Հին Վօյլօտայ թիւ 3

Տպագր. «Առաւօտ» Մ. ՍՈՒՐԵԱՆ

ԱՐԵՒԵԱՆ ԵՒ ԸՆԿ.